


“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1888

ԹԻԻ 9



ԹՆԴԱՆՈԹՈՎ ՈՂՋՈՒՆՆԷ

Կ'ընէր այնպիսի ճամբայ մը: Ապարդիւն ելան նաև Երուսաղիմ և Ռոմայի հիւսիսային ծովեզրերէն նաւարկելու նման.

ԹՆԴԱՆՈԹՈՎ ՈՂՋՈՒՆՆԷ

Ամերիկայի դիւտէն քիչ ետքը մարդիկ սկսան ջանքեր ընել զանելու նաւերուն համար ճամբայ մը որով անցնէին Ամերիկայի ցամաքին հիւսիսային ծովեզրէն, վասն զի կը կարծուէր թէ այն պիտի ըլլար արեւելեան Ասիա երթալու ամենէն կարճ և ամենէն աղէկ ճամբան: Այս ջանից մէջ շատ մը աներկիւզ մարդիկ կորսնցուցին իրենց կեանքը, և ի վերջոյ ստուգուեցաւ թէ Հակարչային Ովկիանոսի մշտնջենաւոր սառը անկարելի

օրինակ ջանքերը մինչև ասկէ քանի մը տարի առաջ, երբ յաջողութեամբ կատարուեցաւ այն նաւարկութիւնը: Ռուս նաւորդներու խումբ մը նաւապետ Նորտէնքիլիտի առաջնորդութեամբ ճամբայ ելաւ Ռուսիայէ, և Սիպերիոյ ծովեզրէն անցնելով ի վերջոյ հասաւ Պեհրինկայ նեղուցը և մտաւ բաց խաղաղակայնը: Նաւորդաց կրած վտանգները և դժուարութիւնք մեծ էին, բայց շուտով մոռցուեցան երբ իմացան անոնք թէ կատարած էին գործ մը զոր ոչ ոք իրենցմէ առաջ յաջողած էր կատարել: Մեր պատկերը կը ցուցնէ նաւոր-

ջանիկ են, կ'ուզեն պուռալ և բարձր ձայներ հանել օրչափ որ կրնան. և չափահաս մարդիկ բոլորովին տարբեր չեն փոքր տղոցմէ: Թնդանօթ արձակելը, գանգակներ հնչեցունելը, շողեմ նաւուն սուրբ տալը, ուրախութեան ձայներ հանելու կերպեր են: Յուսանք որ երկար ժամանակ անցնի մինչև որ և իցէ աղբ առիթ ունենայ արձակել թնդանօթներ ուրիշ նպատակաց համար բաց ի ողջունատուութեան:


ՍՓԻՆՔՍ

Մեմֆիս, Եգիպտոսի հին մայրաքաղաքը, Նեղոսի արևմտեան ափանց վրայ էր Գահիրէէ իբր տասը մղոն դէպ հաւուս: Մեմֆիս Եգիպտոսի ուսման և կրօնքի կեդրոնն էր և հռչակաւոր իբր

պարսպաց և տաճարներուն գեղեցկութեանը համար Հաղարաւոր տարիներ գլխաւոր քաղաքն էր Ստորին Եգիպտոսի, և հիմա գրեթէ մոռցուած

գերը նաև վեց աւելի փոքր բուրգեր անոնց մտ :  
Նոյն դաշտագետնին վրայ կը գըտնուի նաև մեծ սփինքսը որ բոլոր բուր-

Մարմնոյն երկայնութիւնն է 188 ոտք, և գլխուն բարձրութիւնը՝ 28 1/2 ոտք : Այս համեմատութիւններն աւելի լաւ կը հասկնանք եթէ նայինք թէ պատ-



է անոր տեղը : Բայց Մեմփիսի և Գահիրէի մէջտեղ էր «մեռերոց քաղաքը», բարձր դաշտագետնի մը վրայ գետէն վեր : Այս էր Մեմփիսի թագաւորաց գերեզմանատունը, և հոս այսօր կը կանգնին Եգիպտոսի երեք մեծ բուր-


գերէն ալ հին է : Կան զիտուններ որ կը կարծեն թէ սփինքսը վեց հազար տարիէն աւելի հին է : Միակտուր ժոյ՛ռէ կոփուած է այն, և կը ներկայացունէ մարդու գլխով առիւծ մը :

կերին մէջ սփինքսին քով կանգնող մարդը որչափ փոքր կ'երեւի : Միջակ բարձրութիւն ունեցող չորս մարդիկ եթէ կանգնէին մէկը միւսին գլխուն վրայ՝ պիտի ցուցնէին սփինքսին գլխուն երկայնութիւնը կզակին վարի

Սփինքս

ծայրէն մինչև գագաթը:

Միկինքսին մարմինը աւազով ծածկուած է, բայց հիմա աւազը մէկդի առնուելով դուրս կը հանուի քանի մը Գաղիացոց ձեռամբ: Վերջին անգամ որ աւազէն մարրուեցաւ այս կերպով, թոթմէս Գ. ի իշխանութեան ժամանակն էր, ասկէ իբր 3,400 տարի առաջ:



ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԻՐԲԵՒ ԱՆՑԱԳԻԻ

Գարուս առաջին քառորդին ժամանակները Արճէնթին Հանրապետութիւնը ի Հարաւային Ամերիկա, Նախագահ Ռոզասի բացարձակ բռնապետութեան ներքեւ կը գտնուէր: Նեն գոթեամբ և անգթութեամբ բարձրացած էր նա այս դիրքին՝ նուստ վեճակներէ, և իւր պաշտօնավարութեան միջոցին սպաննեց աւելի քան վեց հարիւր մարդ: Քաղաքական շարժումներով հրաւիրեց Եւրոպայէ գաղթականներ, և պաշտպան կանգնեցաւ ճարտարագործութեան և վաճառականութեան, բայց օտարականաց թոյլ չէր տրուէր մտնել Հանրային գործոց մէջ կամ հրամանատարի պաշտօն վարել բանակին մէջ:

Այս միջոցին երկրին ներսի կողմերէն երիտասարդ մը դիմեց Գերմանացի հիւպատոսին, որ Պրէմէնէ եկած էր, որպէս զի վկայէր անոր Գերմանացի ծնողաց զաւակ ըլլալը: Առանց այսպիսի վկայութիւն մը տրուելու պիտի բռնադատուէր նա զինուորական ծառայութեան մտնել, որ շատ անտանելի բան մըն էր Ռոզասի վարչութեան ներքեւ: Երիտասարդն Սպաներէն շատ լաւ կը խօսէր, և խօսակցութիւնն այն լեզուով եղաւ:

«Լաւ, իմ բարեկամս», ըսաւ հիւպատոսը, «նոր է քու ազգաբանութեանդ վկայականը:» «Չունիմ վրկայական:» «Ուրիշ վկայական ալ չունիս:» «Ոչ, Տէր:» «Ուրեմն հոս բեր ծնողքդ:» «Շատ առեն է որ մեռած են թէ հայրս թէ մայրս:» «Բայց կրնաս խօսիլ Գերմաներէն, գոնէ քանի մը բառ, այնպէս չէ:»

Երիտասարդը լուռ կեցաւ: «Գժուարին խնդրի է: Ի՞նչպէս կրնամ վկայել թէ դուն Գերմանացի ծնողաց զաւակ ես, եթէ ապացոյց յառաջ չբերես:» «Ինչպէս Աստուած ճշմարիտ է, ճշմարիտ է նաև թէ ես Գերմանացի եմ: Իմ հայրս և մայրս, երկուքն ալ Գերմանացիք եկած են և ես հոն ծնած եմ: Սուտ չեմ խօսիր:»

Հիւպատոսը կը ճեմէր ետ և առաջ,

մտածելով: Երիտասարդը համեստ կերպարանք մը ունէր և կը խօսէր պարզ և համարձակ, և սակայն — իսկոյն հիւպատոսին միտքը բան մը ինկաւ, կեցաւ երիտասարդին առջև և ըսաւ, «Բարեկամս, միտքդ կրնաս բերել մանկութեանդ ժամանակի բան մը, երբ մը, աղօթք մը զոր սորվեցուցած է քեզի մայրդ:» Երիտասարդին աչքին մէջ պայծառութիւն մը եկաւ. «Այո», գոչեց, և տղու մը պէս ձեռուրները կուրծքին վրայ խաչաձև դնելով, ըսաւ Տէրունական աղօթքը Գերմաներէն լեզուաւ բառ առ բառ և առանց վարանելու. և երբ ընցուց, արտասուօք լեցան աչուրները միտքն ինչաբով մայրը որոյ ծնեաց վրայ սոր-

կակած կրնամ տալ քեզի ուղած վկայականդ, վասն զի միայն Գերմանացի մայր մը կրնայ սորվեցուցած ըլլալ քեզի Տէրունական աղօթքը քու մայրենի լեզուաւդ:»

ՄԻԱՆԻՒ ՍԱՅԱԿՈՎ, ՃԱՄԲՐՈՒՊԻՈՒՆ

Թուրքիոյ մէջ կան շատեր որ բռնաբարձ գրաստ են: Նոր տեսարաններէն մին զոր Եւրոպացի ճամբորդի մը հետաքրքրութիւնը կը շարժէ, երբ առաջին անգամ կ'այցելէ Թուրքիոյ քաղաք մը, ծանր բեռներու ներքեւ ծող բեռնակիրներն են: Աւելի լայն և աւելի հարթ փողոցներու մէջ այս գործը գրեթէ բոլորովին պիտի կատարուէր ձիերով, և բեռնակիրք փո-



ՄԻԱՆԻՒ ՍԱՅԱԿՈՎ, ՃԱՄԲՐՈՒՊԻՈՒՆ

ված էր այս աղօթքը: Բասն տարիներ շնջած էին անոր յիշողութենէն ամէն բան որ կարենային հաստատել անոր Գերմանացոյ զաւակ լինելը բայց ի այս առաջին աղօթքէն որ խորապէս ապաւորուած էր յիշողութեանը վրայ:

Այս ապացոյցին անարուեստ և բնական լինելը անոր ճշմարիտ ըլլալուն նըշան էր: Երիտասարդին մեծարանաց ձևերը և զգացմանց շարժիլը մօրը յիշատակին վրայ, և միտք բերած խօսքերուն սրբազան լինելը — վասն զի այս էր գրեթէ վկայ կոչել զՍտուած — այս ամէնքը պարզ բողոք էին մարդկային դատողութեան, և մեծ զօրութիւն ունէին համոզելու, մինչև իսկ առանց ձևապէս երգում ընելու: Հիւպատոսին զգացումներն անգամ շատ շարժեցան: «Լաւ, իմ երիտասարդ հայրենակիցս», ըսաւ, «հիմա ես ան-

խանակ բեռներն իրենց կունակն առնելու, պիտի գործածէին փոքրիկ սայլեր:»

Չինաստանի մէջ, մանաւանդ պետութեան հիւսիսային մասին մէջ, մարդիկ իրենց ոյժը ուրիշ կերպով կը գործածեն: Հոս պատկերին մէջ կը տեսնես որ մարդ մը երկու մարդիկ կը տանի մէկ անիւ ունեցող սայլակի մէջ: Մարդիկ կը նստին սայլին անուոյն առանցքին վրայ, այնպէս որ սայլը քաշող անձը չկրէր անոնց ծանրութիւնը, և երբ գետինը հորիզոնական մակարդակ է, կամ զառ ի վայր, գժուար չըլլար գործը: Մարդ ձիու չափ արագ չքալէր, բայց այս կերպով ճամբորդութիւնն աւելի աժան է, և Չինացիք ընդհանրապէս արտորացող ժողովուրդ չեն:

Կ'ըսուի թէ այս կերպով հանգիստ

ճամբորդութիւն կ'ըլլայ, բայց սա պայմանով որ անուոյն միւս կողմը գտնուող անձն ըլլայ բարեկամ մը: Պատկերին մէջ յուցուած մարդիկը իրարու եղբայր կը նմանին:

Որովհետեւ սայլը միայն մէկ անիւ ունի, բեռը պէտք է երկու կողմը հաւասարակըւել. եթէ ճամբորդներէն մէկը սայլէն վար գլորի, ան շուշա միւսն ալ պիտի գլորի: Բայց ս. րովհետեւ ձին ոչ կից կ'արձակէ և ոչ կը վազէ կը փախչի, այսպիսի արկածէ մը յառաջ եկող վտանգը մեծ չէ:



**ԴԵՌԱՀԱՍԱԿ ՏԱՄՆԱՊԵՏԸ**

Գաղխական բանակին տանապետներէն պատանի մը\* գինովութեան առտն զարկաւ իւր մեծին: Պատանուոյն այս բրածը շատ ծանր յանցանք էր: Դատուեցաւ նա զինուորական ատեալնի առջև և վճռուեցաւ որ հրացանի բռնուելով սպաննուի. բանա դրուելու և կը սպասէր վճռոյն ի գործ դրուելուն: Զանքեր եղան ներում ստանալու, բայց ի զուր: Եւ սակայն գնդապետը շատ կը սիրէր բանտարկեալը, և անդադար կ'աշխատէր անոր ներում շնորհելու առջ, որ ի վերջոյ յաջողեցաւ ալ, սա պայմանաւ որ եթէ երբէք դարձեալ տեսնուէր անոր գինովալը, հրացանի բռնուէր: Գնդապետը բանա գնաց իմացուաներու համար պատասխանալ զեռահասակ տանապետին թէ ներում շնորհուած էր անոր:

«Ո՛հ, Տէր գնդապետ», ըսաւ թըշուտաւ պատանին, մինչ նա ներս կը մտնէր, «տես թէ իմ յիմարութիւնս ինչ բերաւ գլխուս» «Գիցուք թէ», ըսաւ գնդապետը, «ըսէի քեզի որ ներում շնորհուած է քեզ սա պայմանաւ որ այլ ևս բնաւ չիմես»: Պատանուոյն երեսը յուսոյ ճառագայթ մը փայլեցաւ այս խօսքին վրայ: «Եթէ դարձեալ երբէք համն առնուս ոգելից բնակեցայ, կեանքէդ պիտի ելլես», յաւելցուց գնդապետը:

«Ո՛հ, անկարելի է ինձ այդ», ըսաւ ողորմելի պատանին. «ես չեմ կրնար ապրել և չիմել: Բնա՛ւ խմելու չեմ»: «Բնա՛ւ»:

Ողորմելի պատանին դարձեալ ինկաւ յուսահատութեան մէջ: «Բան մը չկրնար արդելել զիս խմելէն: Անկարելի պիտի ըլլայ ի գործ գնել պայմանը»: «Կրնուի խօսք առնուլ քեանէ և լոնը խոստմունքը իբրև զինուորուցեաց պատուոյդ վրայ», ըսաւ գրնդապետը, բողբոջելով զինուորական ոգւոյն և պատուոյ բարձր զգացման զոր լաւ դիտէր թէ ունէր պատանին:

Պատանուոյն հողին կը տոչորէր իւր ներսի դին: Գնդապետին բողբոջ յառաջ բերաւ բաղձաղեալ արդիւնքը: «Տես, Գնդապետ», գոչեց պատանի զինուորը, «տես», և վերցուց իւր բազուկը դէպ ի երկիւնք, «Աստուծոյ օգնութեամբ այսուհետեւ բնաւ իմ չըր-

թանցս պիտի չդպցունեմ ոգելից ըմպելի»:

Պատանին եղաւ յետոյ հրամանատար կայսերական թիկնապահներուն: Մնոր անունն անդամ ունեցաւ զորութիւն: Պահեց խոստմունքը, այն նոյն ոգւով որ յատուկ էր այն յիշատակաց արժանի խօսքին, «վաղեմի թիկնապահքս կը մեռնիսք բայց բնաւ չենք ըլլար անձնատուր»:

Կը տեսնէք աղայք, թէ ինչպէս սուղի նստաւ ոգելից ըմպելեաց այն օձին խայթուածը. այնպէս սուղի նստաւ որ արիասիրտ դեռահասակ տանապետին կեանքը զոհ պիտի երթար:



**ՆԷՓԹԻՒՆ**

Շատ տարիներ առաջ հայրս, կ'ըսէ նամակագիր մը, ունէր շուն մը որուն վրայով ձեղի պիտի ընեմ աղուոր և ստոյգ պատմութիւն մը: Մնունն էր Նէփթիւն, բայց կը կոչուէր «Նէփ», Նիւ Ծառուսլընտի շուն մը, մեծ և թաւամաղ: Իւր տէրն ունէր գործարան մը, և Նէփի պարտականութեանց մին էր պահպանութիւն ընել վաճառատան՝ իրիկունները մինչ տէրը բացակայ գտնուէր: Իւր տէրը միշտ դէձերը կը դառնար իւր ճառատուն, վասն զի հոն կը պառկէր: Գիշեր մը մինչ կը գոցէր դուռերը և պատահանները, ոտքը դուրս դրաւ և ըսաւ, «Մնաս բարով, Նէփ, աղէկ նայէ բաներուն»: Տարակոյ շունիմ թէ՛ եթէ Նէփ կարող ըլլար խօսել, պիտի ըսէր, «Շատ աղէկ, տէր իմ»: Բայց միայն շարժեց իւր պոչը իւր սովորական կերպով, և յետոյ սկսաւ շրջիլ աստ և անդ պահպանութեան գործին համար: Վաճառատան ետևի կողմը գտնուող փոքր սենեակին մէջ գտաւ որ դուռ մը ելած էր իւր տեղէն այն օր ցերեկին, և փոխանակ ըստ արժանուոյն նորոգուելու, իւր տեղը դուռած էր կոծող մը կռթնցունելով ներսէն: «Աղէ՛կ, աղէ՛կ», խորհեցաւ նա, «ահա ինձի գործ», և աչքը այն դրան վրայ պահեց: Կէս դիշերէն երկու ժամ առաջ դուռը գգուշովութեամբ մէկդի հրուցաւ քիչ մը, զըլուս մը ներս մտաւ, այնուհետեւ զոյգ մը ուս, և վերջապէս սամբոջ մարդ մը մտաւ ներս և կեցաւ փոքր սենեակին մէջ: Նէփ շարժում մը անգամ չըրաւ: Թերևս անձնք ալ խորհիք թէ ինչու համար Նէփ չէր բնէր ուրիշ պահպան շուներու նման, երբ ըսեմ թէ նա բնաւ չէր արդելեր որեկից մէկը իւր հսկած վաճառատունը կամ սենեակ մը մտնելէ: Բայց այսպէս էր բանը: Սակայն ուրիշ բան մին ալ ըսեմ. անգամ մը որ ներս մտնէր օտարական մը, բնաւ չէր թողուր անոր ելլել դուրս: Ուս-

տի գողը դէպ ի ներս քաղց, և սկըտեց ասդին անդին պտրտել կողոպտելու համար. բայց ահա ինկաւ դեմին Նէփի թաթին մէկ զօրաւոր հարուածով: Ոչ հաշեց և ոչ մրմնաց Նէփ, միայն նստաւ լսելի, իւր թաթը դրած՝ գողին կուրծքին վրայ: «Աղուոր, սիրուն շուն, աղուոր կենդանի», կ'ըսէր մարդը, ձեռքերովը շփելով զայն: Չայն մը չէր հաներ Նէփ, բայց միայն սա կ'ընէր որ երբ մարդը ելլելու փորձ կ'ընէր, կը շուշուր իւր ակառները և իւր ոտքով անոր վրայ կը կռիւր քիչ մը առելի ուժգին: Սյս վիճակին մէջ կը գտնուէին անոնք մինչև որ քիչ մը ետքը ներս եկաւ տէրը: Երբ կը դառնար անցնել երթալ իւր սենեակը, լսեց վաճառատան ետևի կողմէն խեղդուկ ձայն մը որ կը կանչէր: Եւ ահա դառնալով տեսաւ ինչ որ նկարագրեցի, այսինքն մարդը տարածուած և գետնին պառկած, և շունը իւր թաթերը դրած՝ անոր կուրծքին վրայ: Հայրս իրեն կանչեց շունը, օգնեց մարդուն ելլել, և հարցուց անոր թէ ինչ կ'ընէր հոն: «Ես պիտի պատմեմ ձեզ», ըսաւ մարդը, «ես հոս մտայ գողութիւն ընելու համար. օտարական եմ քաղաքիս մէջ, չեմ կրնար գտնել գործ և անօթի եմ: Այդ շունն արգելեց զիս ընելէ առաջին գողութիւնս»: Հայրս քիչ մը հաց և կերակուր տուաւ անոր. և քառորդ մէճիս, և ըսաւ որ երթալ տեղ մը գտնէ պառկելու. այսպէս արձակեց զնա, բայց բտրով նաև որ հետեւեալ օրը գայ, և խօսք տուաւ ջանալգործ մը գտնել անոր: Հետեւեալ օրը եկաւ մարդը, և գործ մը յանձնուեցաւ անոր քիչ մը անդին. մարդը այնպէս հաւատարմութեամբ կը գործէր որ բարձրագաւ քայլ առ քայլ, մինչև որ կարող եղաւ ինքնագլուխ գործ բանալ, և այսօր իւր բնակած քաղաքին մէջ պիտի և արմտեայ ամենէն յաջողակ վաճառականներէն մին է: Մարդը և Նէփ յետոյ շատ բարեկամ եղան իրարու, մինչև որ մեռաւ Նէփ քսան տարեկան:



**ՀԱՆՆԵՆՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԳԵՆ**

1. Մտկայարկ մի թագաւորն
2. Ասուերոս թագաւորն կինն
3. Դպիտ հար
4. Մայր Իսայիկի
5. Յովսէփայ մի որդին
6. Տարեգրութի շրէն
7. Իսրայիլի մի թագաւորն
8. Դաւիթի մի կինն

Մէն մի բառ կը բաղկանայ հինգ գիրերէ: Այս ութը բառերը կարգաւ մին միւսին սակ գրուելով, և ձեռք կոտրի սկզբնատառերը վերէն վար կարգաւ, կը կազմեն Սուրբ Գրոց մէկ սխումած աւարանի մը անունը:

Կ. Գոլիս ԱՐՄԱՅԵՍ Բ. ԱՅՐԱՌԱՅԵՍ

Ամերիկայի Միտինոնապ ընկերութեան կողմէն, Արտատպութիւն Դ. Կ. Կ. Կ. Սուրբն—Խմբագիր Զ. Պ. ՊԱՐՆԷՄ Ծննդանշանը եղաւ լաւ, Ամերիկայի Իսթ:

**ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ**  
 Ի ՏՈՒՐԱՆԻ Ա. ՏՈՒՐԱՆԻ ԳՈՒՐԱՆԻ